

ՆՈՐՈՂԱՐ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Գ/Ն 20 Փարս

Ը. ՏՄՐԻ 27 ԹՂՇՐԻՆԻ ՍՈՒԻ

ՇԱՐԱԹ 27 ՆՈՅՆՄԱՐԻ 1876

Ն. Տ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 9 ԹԻԻ 1911

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մօլթանի բոսթի թղթակիցը մեծ Եպարքոսին բարձրաստիճան պաշտօնատարի մը հետ ըրած մէկ խօսակցութիւնը կը հրատարակէ, ուր Մեծ Եպարքոսն ըսեր է թէ՛ Տաճկաստան Բարիլի դաշնադրութենէ կապուած է և Մեծ Եպարքոսն ձեռքի տուած պիտի քալէ. թիւրքիս ըսեր է՝ այսօր նախկին սուլթանին գէշ կառավարութեան հետեանց տակ կը ընկնէ անոր զօրքը և սուլթանը զուլթան անկարելի էր. հետեալ բար երկիրը երթալով աւելի գէշ վիճակ ստացաւ. Բուսիա շատ գոհ էր այդ վիճակէն, վասն զի դիտար թէ հետեանքը անխիղճանութիւն և աւերում էր. անկէ ետքը եկաւ Հէրսէքի ապստամբութիւնը, որու հեղինակին ո՛վ ըլլալը ամեն մարդ գիտէ. այս ապստամբութիւնը տարի մը տևելէն վերջը Մուլթան Աղիլի դահլիկցիութեան յեղափոխութիւնը եկաւ: Մուլթան Մուրատ մինչև որ 40 օր թագաւորեց՝ իր մտային կարողութիւնը կորսնցուց, ասով ամենամեծ պատասխանատուութիւն մը ծանրացաւ մեծ Եպարքոսին և միւս նախարարաց վրայ, մինչև որ Մուլթան Մուրատի թագաւորելու անկարողութիւնը հաստատուեցաւ բժշկական յանձնաժողովով մը. Բուսիա ամեն արդէնք կը յարուցանէ բարեկարգութեանց առջև, և երբ Բ. Գուռը զեղծումները անհետացնել կաշխատի Բուսիա աւելի թշնամեական լեզու կը գործածէ և իր մեքենայութիւնները աւելի վարպետութեամբ կը տարածէ:

Մուլթանը 40 զանազան ցեղերու վրայ կը թագաւորէ, որոց ամեն մէկը զանազան լեզու, գաղափար, սովորութիւն և շահեր ունին: Մէհմէտ Բիւշաի բաշա՝ կը յաւելու, թղթակիցը Տաճկաստանի բարեկարգելն է և Միտհատ բաշայէն սա տարբերութիւնը ունի, որ Միտհատ բաշա անմիջապէս և անարգել գործել կուզէ, մինչդեռ Բիւշաի բաշա ամեն կողմը կը մտածէ և յառաջ կը վարէ բարեկարգութեան գործն: Արդարև զիստ գրեւոր ըլլալով Մուլթանը հաթ բաշայի ընթացքը բարեկարգութեան գործն գծուարութեանց հանդարտէ կրօնամուլթեան երեսէն. Տաճկաց կրօնամուլթեանը կրօն, չափազանց կը պատմեն, բայց այնպէս չէ, տաճկաց հաւատքին չը գպելուդ պէս՝ արդէնք մը չես տեսներ, բոլոր աշխատութիւնը պէտք է ըլլայ Տաճիկ համոզել որ՝ բարեկարգական այն ինչ օրէնքն ֆուրանի տրամադրութեան համաձայն է:

—

Կարգէթ տը Մօսքու հետեւալը կը գրէ:

«Իրաց վիճակը կը ծանրանայ. սպառազինութիւնն սկըսաւ, և քիչ օրէն մեր զօրաբանակն, եթէ հարկ ըլլայ, պիտի կարենայ պատերազմի դաշաք երեւիլ: Բուսիա առանց երրուպական խաղաղութիւնը վրդովելու և առանց մէկը գրգռելու՝ երրուպական խղճին արտասանած վճիռներն գործադրել տալու միջոցը գտաւ: Իր առաջին պաշտօնէին շրջաբերականը սոյն սրոյշեալ միջոցին ելքը լաւ կը բացատրէ, և հաւանական է

որ Տէրութիւնք իրենց Բ. Դրան նկատմամբ ունեցած և շատ անդամներ յայտնած դիտաւորութեանցը զրուսիա իբր թարգման չի պիտի ճանաչեն:

«Բոլոր Տէրութիւնք երկար ատենէ ի վեր միտքան այսպիսի անհանդուրժելի իրաց վախճան մը տալու կը փախաքին, սակայն ցայսօր Եւրոպա դեռսպանագիտական կեղծեօք զբաղեալ չի կրցաւ համարել իր այս փախաքին, որ միայն կրնայ քաղաքական մեծամեծ խնդրոց լուծարման տանեայ ժողովրդոց նկատմամբ խիստ ուղղակի զգացումներով կապուած . . . կարեւոր ազդու միջոց մը գտաւ նախ և առաջ խղճու այն յանկուցիչ կապը, որ դեռսպանագիտութիւնն այնպիսի շրջանակի մը մէջ դրած էր և որմէ ազատին անհնար է ընդդէմ իւր լաւագոյն դիտաւորութեանց:

«Մեր կառավարութիւնն իր բարձր ատեւութիւններովը այսպիսի զինուորական դեր մը կատարելու կոչուած՝ կրցաւ և իր ներկայացուցչներուն զրկած շրջաբերականաւ շանաց հազորդել այն աղատութիւնը որ միայն կրնայ ամեն անխտահարութիւն և երկուութիւն փարատել: Վասնորոյ ստիկ միտքանութեան հաստատութիւնն նըպատակ ունեցող այսպիսի սկըզբանց յայտնութեանք վրայ՝ լորտ Պիքոնսֆիլիտի ատենաբանութիւնը ուրիշ բան չենք կըրնար համարիլ, եթէ սը զուտ ժամանակական վրիպակ մը:

—

Մօնիթէօր Խնիւրվէրսէլի մէջ հետեւեալը կը կարդացուի:

«Այլ և այլ կողմերէն մեզ հասած լուրերուն նայելով՝ Եւրոպայի մէջ ոչ Մեքղիս և ոչ ուրիշ երկիր մը չի կրնար ի սկըզբանէ անտի տարակուսիլ Բուսիայ ներկայ պարագայիցս մէջ բնաւ աշխարհային շահ մը չունենալու հաստատ դիտաւորութեան վրայ: Բեթրպուրկի խորհրդարանն ամեն առթի մէջ իր գործքերն ըրած խօսքերուն կը հպատակեցնէ. իր ուղածք մի միայն Պօսնիոյ, Հէրսէքի և իր ընդունքունն է այսպիսի բաւարարութիւններով, որք Բ. Դրան աշխարհային ամբողջութիւնն անկեղծ պահեն, բայց նոցա գործադրութիւնն ճշգրիտ երաշխաւորութիւններով վաւերանայ:

«Ինչպէս շատ անդամներ ըսուած է, Կ. Պօլսոյ դեռսպանախորհրդոյն գլխաւոր նպատակը սոյն երաշխաւորութեանց կազմակերպութիւնը պիտի ըլլայ: Սրգարի ահաւասիկ խընդրոյն կապն հոս է: Սակայն այսպիսի խնդրոց համար արդէն դեռսպանախորհուրդներ եղած են, և եթէ 1876 ինն ալ քիչ շատ խռովիչ պայմաններով բացուի, չերեւիր թէ իրաց բնութիւնըն դեռսպանագիտական զօրութիւններէն վեր ծրագիր մը գծէ իրեն: Ստուգիւ, բանի մը պատասխանատու ըլլալ անկարելի է, և արդէն Եւրոպական խաղաղութիւնն մեր ցուցածներէն նուազ ծանր դժուարութեանց վրայ աղօտացած է. սակայն կրնայ ալ յուսացուիլ որ ներկայիս մէջ իրարու դէմ գտնուած երկու տէրութիւնք ուղղակի մէկմէկու

չսպառնան, և պատերազմէ զաս
միջոցաւ մը զիրար ըստ օրինի
գոհացընեն :

Օտէսայէն նոյ. 17 թուա-
կանաւ հետեւեալը դրուած է
վիեննայի Գորէսթոնտանո Բօլի-
թիք լրագրոյն :

«Վերջին քառասուն և ութ
ժամերուն մէջ մարտկոցներուն
թիւն աւելցնելու ձեռնարկե-
ցին. և ասոր համար 800 դոր-
ճաւոր վարձուեցան, որով կը
յուսացուի թէ այդ մարտկոց-
ներն շուտով կաւարին : Քա-
րանթինայի ամրոցին մէջ 78 կը-
տոր բերաննին մեծ թնդանօթ
դրուեցաւ :

«Օտէսայի նաւահանգստին
բոլոր ամրութեանցը հրամանա-
տար կարգեցին կոստանդին
Մեծ Գ. քսին գործակից Չիքա-
թօֆ ծովակալն :

«Վիրաւորելոց օգնութեան
ընկերութիւնը Չէքքասքի իշ-
խանն հրաւիրեց, որ 20, 30, 400
և 200 անկողիննոց փայտաշէն
հիւղեր (պարագա) շինել տայ,
որպէս զի ի պահանջել հարկին
մեծ հիւանդանոցներու տեղ
գործածուի :

«Սպառազինութիւնը հետ-
զհետէ սահմանադրոյն կը մօ-
տենան. Պէնտեր ամուր ճակա-
սատեցի մը պիտի հաստատեն.
Վերջին պարզամատ
շինելու համար 300 փուռ շինե-
ցին :

«Ներկայիս մէջ Տօնի բնակիչ-
ներէն այլ և այլ տարիքէ երեք
դաս անձինք ի զէն կը կոչուին :

«Մնչարթ կայուածոց տուր-
քին վրայ 100ին մէկուկէս աւել-
ցուիլ և արդիւնքը պատերազ-
մի պաշտօնէին տրամադրու-
թեան տակ դրուիլ որոշուեցաւ :

«Մեծն Բուսիոյ մենաստանի-
ներն բազմաթիւ կրօնաւոր և
կրօնաւորուհիներ տուին զին-
ուորաց առողջութեանն ծա-
ռայելու համար :

«Բայ ասկից մենաստանաց
տեսչութիւնը իբր պատերազմի
հարկ Չարին վճարելիք ստակն
ալ սահմանած է :

«Հետզհետէ վակօններ կը
պատրաստուին, մինչև հիմայ
300 վակօններէ բազկացեալ
թրէն մը կազմուած է :

Օչագօֆի նեղուցէն օտար
նաւերուն անցքը արգիլուեցաւ.
սոյն գաւառին կառավարութիւ-
նը՝ անոր եզերքը պաշտպանե-
լու յատկացած զօրաբանակին
հրամանատարին յանձնուած է :

Նօրտայէն Արիւմայնէ Ցայ-
թունի լրագիրն հետեւեալ խոր-
հրդածութիւններն կընէ Մնդ-
ղօ-Բուսական դեպանադիտա-
կան գրութեանց վրայ, որք ար-
դեն հրատարակուած են :

«Այս գրութիւններն և մա-
նաւանդ Սղեքսանդր կայսեր
հանդիսաւոր ապահովութիւն-
ներն որք, երկար տանէ ի վեր
Բուսիոյ քաղաքականութեան
վրայ ըրած դատաստանին ա-
մեն կերպով կը համապատաս-
խանեն, հաւատալ կուտան մեզ
որ լօրտ Սալիսպիւրի լաւագոյն
յոյսեր պարունակող պայման-
ներով կը ճանապարհորդէ :

«Ճիշդ այն միջոցին երբ լօրտ
Սալիսպիւրի Պէրլին և Վիեննա
երթալու համար ճամբայ ելաւ,
Մնդղիոյ կառավարութեան յիշ-
եալ գրութեանց հրատարակու-
թեանէն ետքը ըրած գործն մեզ
ենթադրել կուտայ, որ իր խոր-
հրդարանը կայսերական ապա-
հովութեանց մէջ յայտնուած
երաշխաւորութեանց բարձր ար-
ժէք մը կը յարէ, և այս կեր-
պով բոլոր տէրութեանց թա-
փած ճիգերէն աւելի ճգամբք՝
արեւելեան խնդրոյն խաղաղու-
թեամբ լուծուելուն համար հարկ
եղած համաձայնութեան ուղին
կը հարթէ :

«Կորչաքօֆի իշխանին նոյ. 7ի
բողջութեան խնդրոյն ամենա-
փափուկ կէտք կը շօշափէ, զոր
Բուսիա Բ. Դունէն պահանջած
երաշխաւորութեանց կը հպա-
տակեցընէ :

«Սհա այս կէտին վրայ կը
յանգի դեպանախորհրդոյն մէջ
վիճուելիք Բուսիոյ և Մնդղիոյ
առաջարկութեանց հակառա-
կադրութիւնն, և չը դիտուիլը
թէ այս երկու տէրութիւնք
մինչև որ ատրիճան իրարու հետ
պիտի համաձայնին իրենց շա-
հերուն պահպանութեան նկատ-
մամբ : Ստուգիլ անկարելի է
մտնալ որ լօրտ Պիքօնֆիլիսի
ատենաբանութիւնն այնպիսի
վայրկենի մը մէջ խօսուեցաւ, ուր
Մնդղիոյ դեպանին հեռագիրն
լծնարայի մէջ վաղուց լուսնո-
ւած էր :

Սոյն առաջին պաշտօնէին
Բուսիոյ մէջ յայտնած հակա-
ռակամարտութիւնն տեղի կու-
տայ խորհրդածելու, որ այս առ-
թիւ կրնար Բուսիոյ կայսեր խա-
ղաղասիրական ապահովութիւն-
ներն ճանչցնել, որն որ անտա-
րակոյ կրնար լաւագոյն տպա-
ւորութիւն մը յառաջ բերել :
Մնդղիա ամեն պարագաներու

մէջ իր արեւելքի նկատմամբ
պահանջել կրցած ամեն երաշ-
խաւորութիւններն հանդիսաւոր
կերպիւ ընդունած է, և այս
կէտք մեզի իրաւունք կուտայ
յուսալ լաւագոյն արդիւնք,
նաեւ այն պարագային մէջ ուր
Թուրքիոյ և Բուսիոյ մէջ պա-
տերազմն անհրաժեշտ ըլլայ :

ԱՅԻՍԹԵՅԱՆԱՅԻ ՀԱՅ ՄԸ
ԵՒ ՏԱՏԵԱՆՆԵՐՆ

Այս թեմանօղէն հոն բքնա-
կուց Յօհաննէս անուն հայ մը՝
որու մականունն ալ չէ նշանակ-
ուած՝ որպէս զի սրոշ գիտնա-
յինք թէ՛ ո՞վ է ինքը, վաքը-
թի մէջ չորս էջէ բազկացեալ
երկար յօդուած մը հրատարա-
կած է իր ազդակցացը ուղղեալ :

Կան շատ մարդիկ որ բան
մը շինել կարծելով չեն գիտեր
ինչ տուներ կը փլցնեն :

Այս նամակագիրը՝ Հայոցս
օտարաց չը խաբուելու խել մը
յորդորներ կարդալէն ետքը՝
որպէս թէ՛ ատանկ յորդոր մը
կարդալ պէտք էր և տաճկական
տառերով և տաճկական թեր-
թի մէջ ընել օգտակար ըլլար՝
կուգայ խօսքը կառավարու-
թեան դրամով օգնուլուն կը բե-
րէ և հրաւէր կը կարդայ ամեն
Հայու այդ օգնութիւնն բնե-
լուծութեան խօսքը սոյն նամակին
մէջ չըսեր թէ ինք ինչ նուէր
տուած է : Այդ մեղ հոգ չէ,
բայց երբ տանկ ընդհանուր
յորդորներէն մանաւորութեան
կիջնէ և մտնալ ձևանալով Հա-
յոց մէջ գտնուած այնքան հա-
րուսաներու ցանկը՝ միմիայն
Տատեան դերդաստանը կը յիշ-
յականէ յանուանէ՝ իրաւունք
կուտայ մեզ կարծելու թէ՛ կամ
խիտ փոքր գլուխ մէկն է ին-
քը և կամ Տատեան դերդաս-
տանին դէմ յատուկ ո՞ր մը ու-
նենալով զայն տէրութեան, մա-
նաւանդ Տաճկական ազգին
առջև կը դնէ իբրև թշնամի ա-
նոնց՝ այսպիսի բարենպատակ
ձևի մը տակ :

Սհաւասիկ իւր տողերն :

«Իսնէ տեֆթերինտէ օլան
«Ղայրէթիլիլի կէօրիւեօրբմ
«տէ աղլամագտան քէնսիմի
«ալամայօրբմ. մէսէլա Պարութ-
«ճը պաշը զատէլէրի ալթը նէ-
«ֆէր զէվթատէն իպարէթ պու-
«լունտուգլարը վէ էլէէվմ տէվ-
«լէթին սայէսինտէ հէր պիլի
«հիսապսը սէրվէթէ նայիլ օլ-
«տուգլարը հալատ, միւմայիլէյ-
«հիւմտէն եալքնըղ իզգէթլու
«Օհաննէս պէյ թարաֆքնասան

«Իւլ խըրքա վէրլմէսի, վէ տի-
«կէր պիլատէրլէրինին իտէ՛ իա-
«նէ տեֆթերինտէ շիմոկյէ գա-
«տար իսիմլէրի կէօրիւլէմէսի
«աճքնուր վէ թէհուֆ օլունուր
«հալատէն տիր. իշթէ պէնի աղ-
«լատան սէպէպլէր պու կիպի
«չէլէր տիր» :

Սհա ինչպէս կը տեոնուի
այս տողերէն՝ հայրենասիրու-
թեան մէջ լալու և ողբալու
ձևին տակ՝ յիշեալ Յովհաննէս
էֆէնտին իր ազգին էն երևելի
մէկ ընտանիքը մատնանիլ ցու-
ցնելով մտանութեան կողմը կը
յառաջանայ՝ կառավարութե-
նէն անհամար ստակ շահեցան
բտելով :

Մէք չենք ըսեր թէ Տատ-
եանները օգնութիւն չընելու
էին, քաւ լիցի, այլ ընելու էին
անսնք ալ ուրիշներն ալ և նոյն
խի նամակագիր Յօհաննէս է-
ֆէնտին ալ, բայց որովհետև
խնդրոյն հիմք կամաւոր օգնու-
թիւն է՝ ըստ այսմ երբէք նե-
րելի չէ կամաւոր օգնութիւն
չընող մարդք յականէ յանուա-
նէ հրապարակաւ նշաւակել,
այլ օգնողը դուրէլ է պարաքը՝
ատով չօգնողին զգացումը ար-
թնցնելու համար :

Արդ այս այսպէս ըլլալով
ի՞նչ կը նշանակէ Տատեան դեր-
դաստանն : Այսպէս ըսող
կէց գոյանալը փնտուելու ելլել
և որպէս թէ բուն աղբիւրը
գտած՝ անոր օգնութիւնը պար-
տաւորիչ եղանակի տակ դնել :

Սակայն պէտք է գիտնայ
Յօհաննէս էֆէնտին, թէ Տատ-
եան դերդաստանը թէև իր նը-
շանաւոր ազդային և քաղաքա-
կան ծառայութիւններովը՝ և
իւր ընդարձակ յարաբերութեամբ
բը երևելի և առաջին կարգի
դերդաստան մ'է, բայց պարզ
արուեստաւոր և գործարանա-
պետ դերդաստան մ'էր այն, որ
իւր արուեստին մէջ երբէք
զեղծում չը գործեց, այլ ամե-
նայն հաւատարմութեամբ ծա-
ռայելով տաճկական վառօղին
արուեստական արժէքը աշխար-
հի առջև բարձրացուց, և եթէ
այսօր վառօղը Տաճկաստանի
մէջ ոչ քաղաքական, այլ պարզ
առևտրական ապրանք ըլլալ ո-
րոշուի՝ նոյն գործարանապետ
դերդաստանը կրնայ տէրութե-
նէն շահածին տանապատիկը
շահիլ ընդհանուր աշխարհէն
ազատ մյման շնորհիւ : Ինչու
ուրեմն այնպէս մը ցուցնել Տաճ-
կաց թէ Տատեան վառօղապե-
տը իր արժանեօքը չը շահե-

ցաւ . կուզէ՛ք արդեօք Յօհաննէս
էֆէնտի՛ ընդարձակ ցանկ մը
պատրաստելնիս ոչ—արժանեօք
չահոյնքունն . այդ ներքին չէ
ոչ իրեն և ոչ մեզ . թող տէրու
թիւնն ինքը շինէ այդ ցանկը ,
որոց թերևս շատ յետինը պի-
տի դանէ Տատեանց անունը :

ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Երէկ Ազգ. ժողով գումար-
ուեցաւ ի Ղալաթիա ընդ նա-
խագահութեամբ Ամեն Ս. Պատ-
րիարք հօր և Ստենապետու
թեամբ Վսեմ Ստեփան բաշայի :

Օրակարգին չանցած հարցուս
եղաւ թէ ինչո՞ւ վարչութիւնն
Ազգ. ժողովը չը հրահարէ այս-
քան ատեն և պարագայ ժամա-
նակ անցնելուն պատճառ ե-
ղաւ . վարչութիւնը պատաս-
խանայ թէ՛ քաղաքական պատ-
ճառներու առջև խոհեմութիւն
համարած էր Ազգ. ժողովոյ
գումարումը ուշացնել . ասով
ժողովը գոհ եղաւ միայն Գեր-
խորհն վարդապետ Կիրոսեանի
բացատրութեամբ : Յետոյ օրա-
կարգին անցնելու միջոցին՝ փա-
վաղեան էֆէնտի իր առաջար-
կութիւնը ետ առաւ՝ որ երկ-
րորդ խնդիր եղած էր :

Վարչութիւնը խնդիր մը բե-
րած էր Բ. Գրան մատուցանե-
լու սա իմաստով թէ՛ լրելով որ
Բ. Գրան իւր հպատակ ազգե-
րէն ոմանց առանձնաշնորհում
ներ պիտի ընէ՛ Հայոց ազգն ալ
կը խնդրէ որ զինքն ալ մասնա-
կից ընէ նոյն շնորհմանց :

Ստենապետ բաշա զխտորու-
թիւն ըրաւ որ ասանկ ծանրա-
կշիւ խնդիր մը առանց պատ-
ճառարանեալ տեղեկագրի և
առանց նախաքննիչ ձեռնհաս
զիւանին մէջ լրջապէս քննուե-
լու չէր կրնար ժողովին ուղղա-
կի վիճարանութեանը ենթար-
կուել , երեսփոխանաց ոմանք
ստիպողութիւն առաջարկեցին ,
ոմանք վարչութեան ատանկ
ծանր և կարեւոր խնդրոյ մը
առջև ժամանակ անցնելով Ազգ.
ժողովոյ այսքան ուշ բերելէն
զանդատեցան , իսկ ստենա-
պետ բաշան վարչութեան հոր-
ցուց թէ ինքը իբր իւր առա-
ջարկութեան տէրը կ'օգէ ստի-
պողութիւն տալ իւր բերած
խնդրոյն . վարչութիւնը տնվա-
ասէ իւր բերած խնդրոյն քա-
ղաքական յաջողութեանը կամ
անյաջողութեանը վրայ՝ ըսաւ
թէ ինքը ոչ ստիպողութիւն

կառաջարկէ և սչ առաջարկեր,
այլ խնդիր մը է կը բերէ Ազգ.
ժողովին . թող ժողովն ինքը
տայ ստիպողութիւն կամ չըտայ,
ասով վարչութիւնը ձե մը վար-
պետութիւն ըրած պիտի ըլլար,
այսինքն՝ եթէ խնդիրը քաղա-
քականօրէն յաջողութիւն գա-
նէր՝ իւր առ ազգն ունեցած
պարտականութեանց պարծա-
նաց երեսին մէջ պիտի արձա-
նագրէր , իսկ եթէ չը յաջողէր
և կամ Բ. Գրանը ատոր շատ
հաշտ աչօք չը նայէր՝ այն ա-
տեն պիտի դառնար Բ. Գրան
ըսելու , ես չեմ ընողը , Ընդհա-
նուր ժողովն է :

Ժողովն զգաց թէ վարչու-
թիւնը զինքը երկայրի ընթաց-
քի մը մէջ ձգել կուզէ , բայց և
այնպէս հոգ չըբաւ և փախազ-
եան էֆէնտի առաջարկութիւ-
նը քուէի դնելով որոշեց զատ
յանձնաժողովի մը յանձնել , որ
տեղեկագրով մը Ազգ. ժողո-
վոյն բերէ իր կարծիքը :

Ժողովն այս խնդրոյն համար
միաձայն հաւանութեամբ յանձ-
նաժողով անուանեց հարստա-
հարութեան յանձնաժողովը՝ յա-
ւելլով անոր վրայ նաև Գեր .
խորհն սրբազանն ալ : Ս. Պատ-
րիարքն առաջարկեց որ եթէ
սոյն յանձնաժողովն իր գործն
մէկ աւուր մէջ աւարտէ և հարկ
տեսնուի ութ օրէն առաջ ժո-
ղով գումարել՝ գումարէ թէ
ոչ . ժողովն միաձայն հաւանու-
թեամբ երբ որ հարկ ըլլայ կըր-
նաք ժողով գումարել ըսաւ և
ատենը գոյուեցաւ ժամ 9 1/2
ին , անպատէհ միջադէպով մը :

Երբ Ստենապետ բաշա յա-
նուն օրինաւորութեան կը խօ-
սէր և վարչութեանէն կայատէր
նորպողութեան առաջարկու-
թիւնը՝ կրճիկեան էֆէնտի ա-
տենապետ բաշայի դէմ՝ դուք
այս խնդիրը յետաձգելու Դիֆո-
ունիք ըսաւ . և որովհետև անձ-
նական դիտումներէի չէ որ և
է երեսփոխանի՝ մանաւանդ
քաղաքական բարձր պաշտօն
ունեցող և ստենապետութեան
պաշտօն վարող երեսփոխանի մը՝
բոլոր երեսփոխանք բողոքեցին
կրճիկեան էֆէնտիի դէմ . ա-
տենապետ բաշա ի կարգ հրա-
ւիրեց զկրճիկեան էֆէնտի . երբ
սա տակաւին կը պնդէր իր ը-
սածին վրայ՝ Ստենապետ բաշա
յանուն կանանագրութեան յայ-
տարարեց թէ իրաւունք ունի
զինքը ժողովէն դուրս հանելու
ժողովին որոշմամբը եթէ այդ
թշնամական վատ ակնարկու-
թեան վրայ պնդէ . ասով այս
միջադէպը գոյուեցաւ :

ՆԵՐՔԻՆ

Կայտերական հրամանաւ կայ-
սէր առաջին բժիշկ Տօքթօր
Մալրեհնի բոլոր զինուորական
հիւանդանոցներն աչքէ անցնե-
լով տեղեկագիր մը պիտի տայ
Օգոստ . Սուլթանին :

— Վաղըթ կը գրէ թէ անց-
եալ օրուան քօնֆէրանտին մաս-
նաւոր դումարմանը մէջ՝ Անգ-
ղիոյ ներկայացուցիչէն զատ՝
միւսներն մէկ մէկ պատճառ
բռնելով իրենց որոշ կարծիքը
չեն յայտնէր , հետևաբար հարկ
է տեսնուեր կանխաւ Բուսիոյ
և Անգղիոյ համաձայնելուն և
անկէ ետքը պաշտօնական դու-
մարում մը ընելու :

— Գերմանական թերթ մը
կըսէ թէ ժէնեւալ Մանթրօնի
յատուկ պաշտօնով Բէթրապուրկ
դրկուելու համար Պէրլին կան-
չուեցաւ պէտք եղած հրա-
հանդները ստանալու :

— Ս. Բէթրապուրկի դեռ-
պան Գապուլի բաշա երեկ Կ.
Պօլիս հասաւ :

— Եւրոպական Տաճկաստա-
նի մէջ գտնուած Անգղիական
քօնսոլոններէն շատերն Կ. Պօլիս
եկան . Պէլլիատի , Բուսուքի ,
Սէլանիկի և Սերէյիօի քօնսո-
լոններն բոլորն ալ հօթել տը
Պիզանս եկան :

— Ստաղաթ տաճկական
թերթը ինքն իրմէ հրատարա-
կութենէ դադարեցաւ :

— Յունական թերթերը կը դը-
րեն թէ թաթար բաղարճըրի
Յոյները Յունաստանի նաւային
զօրութեան ի նպաստ 6000 տը-
րակաթի նուէր մը ըրեր են :

— Բէթրապուրկէն կը հեռագ-
րեն ամսոյս 6 ին թէ ֆիլիսէֆի
բանակին ընդհանուր հրամա-
նատարը իր բանակը հասաւ :

ՁԻՆԻՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Ս. Ր Ե Ս. Ն Հ Ս. Ր Կ

Բ. Գրան պատրաստած բա-
րենարդմանց առաջինը կամ
մանաւանդ հիմք , ինչպէս կը
լրենք , տէրութեան ամեն կար-
գի ժողովրդոց կատարեալ հա-
ւատարութիւնն է օրինաց առ-
ջեւ : Եւ որովհետև իրաւանց
հաւատարութիւնը փոխադար-
ձարար պարտեաց հաւատարու-
թիւն կենթադրէ , բնականա-
բար զինուորական ծառայութեան
կամ որ նոյն է՝ արեան հարկի
խնդիրը կը ներկայանայ մեր
առջև իբրև պարտեաց հաւա-
տարութեան առաջին պայման ,
խնդիր մը որ արդէն բաւական
զբաղեցուցած է թէ՛ կայսերա-
կան կառավարութիւնն և թէ՛
տէրութեան ոչ—մահմետական
հպատակաց միտքը . ուստի ար-

ժան կը համարինք այս մեծ
խնդրոյն վրայ նոր քննութիւն
մ'ընելով մեր կարծիքը յայտնելու
Արդ՝ ի՞նչ պէտք է ըլլայ
քրիստոնէին դիրքը արեան հար-
կի խնդրոյն մէջ :

Յայտնի է թէ Գրքմի պա-
տերազմին վերջերն հրատարակ-
ուած խաթիթի Հիւմայունին
մէջ վեհ . Սուլթանը խալիանց
գլխահարկի տուրքը (խարաճ)
որ սարկութեան հարկ մ'էր , և
իւր ամեն հպատակներն հաւա-
սար հրատարակեց :

Երբոր գործադրութեան ե-
կաւ , կառավարութիւնն անպա-
տէհ դատեց քրիստոնէայ ժո-
ղովուրդներն երկրին պաշտպա-
նութեան գործին մասնակից ը-
նել , Կառավարութեան արժանի
է որ նոյն իսկ քրիստոնէայ ժո-
ղովուրդը ալ անպատէհ դա-
տեցին այդ մասնակցութիւնն ,
և այսպէս երկու կողմն ալ հա-
մամիտ էին . կառավարութիւնը
չուզելու , քրիստոնէայք ալ յան-
ձն չառնելու մասին :

Բայց որովհետև սկզբունքն
ընդունուած էր , զինուորագրու-
թենէ ազատութեան տուրքը
հնարուեցաւ յիսնէի ասքէրկէ՝
անուամբ , որ քրիստոնէից վը-
ճարած հին խարաճի տուրքը
կը կրկնապատկեր ու կեռա-
պատկեր :

Ինչ էին երկու կողմէ յա-
ռաջ դրուած պատճառները :
Կառավարութիւնը՝ խնդրոյն
յանկարծական բնութիւնը պատ-
ճառ բռնելով վարանում ցոյց
կուտար : Քրիստոնէայ ժողո-
վուրդները , կըսէր , որք մինչև
այն ժամանակ ստրկութեան
մէջ ապրած ըլլալով կրնային
անցելոյն ռիք պահած ըլլալ ,
զինուորներն անպատէհ էր : Մի-
թէ չէ՛ին կրնար զինուց մէջ
բաւական վարժուելէ ետև՝ օր
մը կառավարութեան դէմ դար-
ձնել զայն՝ ցեղական կամ կու-
սակցական ոգւով : Ուստի կա-
ռավարութեան ատուութեամբն
երկրին ապահովութիւնը վտան-
դի մէջ ձգել և խռովութեան
նոր տարերք ստեղծել էր : Աս-
կէց զատ , երկրին պաշտպանու-
թեան իրաւունքն այլ և այլ կար-
գէ ժողովրդոց մէջ բաժնելով ,
մինչև ցարդ տիրող ժողովրդ-
եան բարձր դիրքը խոնարհեցը-
նել էր՝ առանց անմիջական օ-
գուտ մը ձեռք բերելու միա-
բան դործակցութեան մը հա-
մար :

Մասիս
Շարունակելի

ՏՕԲԹՕՐ ՄՍՐԲԵՐ

Վիեննա մէջ թէպէտ ինչո՞նք օն պէշ սէնէ մուգատտէմ տիրումն ալբը վէ պիր չօդ Է վրոպա խաս թախանէլէրտէ բրօվա իթմիշ օլանն սօքթօր Մարքեր՝ պու տէֆա Պէշիթաշտա Բաշա մահալէսինտէ Բուս քիլիսէսի գարչըքնտա 4 նիւմէրօլու քէնտի խանէսինտէ հէր կիւն սաաթ 3-3է բաղարտան մաատա ֆա գիր խաթալարա մէճճանէն պա գաճագ տըր :

Բաղար իրթէսի, չարչամպա վէ ճումաա կիւնէրի սաաթ 7-9ա դատար Թագսիմտէ Պաթիր վիդ էճգախանէսինտէ, վէ սալը վէ բէրչէմպէ վէ ճումաա իրթէսի կիւնէրի Գալաթատա վօյլօտա սօգաղքնտա Բօլօնէզ էճգախանէսինտէ սաաթ 7-9ա դատար պուլունուպ հէր նէվի խաթալարա պագաճագ տըր :

Պունտան մաատա վազքթ լարտա պալէատէ զիք օլունան խանէսինտէ պուլունուր :

Միւմայիլէ յճ սօքթօր, ճէրահլըգ վէ էպէլիք վէ բահիմ իւֆիւնէթի, գանլը վէ գուրու պատուր, սքթմա, կէօյիւս, տէրի խաթալարըք, ֆրէնիկ վէ օնտան գալմա գուլագ, պուրուն կէօզ վէ բահիմ վէ եէլէրի նէ գատար էսկի օլա բէհրիդիզ ազ վազքթ դարչնտա տէֆ իտէճէք, վէ պէլ սօուգլուգ եէնի վէ էսկի քէնտի ալէաթքնտա օն տէֆատա տէֆ խտէճէյիւի իւլանն էլէր :

Գեկտ. 9

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Տաղեր, ճառեր, Առածներ, Նամակներ, Գրադատումներ, Արգասի Խոհերը

Երկրորդ տիպ.

Արամեան տպագրութիւն կը ծախուի Սրապեան Պաղտատար աղայի խանութը, գին 15 ՂԸ :

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻՍՐԱԿՈՒԹԻՒՆ

Վարժապետական Ժողովի մէջ խօսուած ճառեր

Արամեան տպագրութիւն

կը ծախուի Ս. Ղ. եւ Եաղմաճեան դրատունը, գին 13 ՂԶ :

ՏՕԲԹՕՐ ԶԷԼԱ

Մասնաւոր դարմանիչ Սրապիւղիսթ Գաղիական ախտի և նոյն կամ որ և է պատճառաւ ծագում առած ամբողջ ճքննգական գործարաններու վերաբերեալ հիւանդութեանց :

Ինչպէս ծանուցինք, Տօքթօն ճէլալին թէ իւր աշակերտութեան ժամանակ և թէ վրկայեալ բժիշկ անուանուելէն վերջը մասնաւոր ուսումն քրած ըլլալը թէ Գաղիական և թէ ուրիշ որ և է տեսակ ճննգական գործարաններու վերաբերեալ հիւանդութեանց ճիւղերուն մէջ, և որուն այս մասին ունեցած ճարտարութիւնը շատերուն ծանօթ ըլլալն գիտնալով, կը ծանուցանենք Արգոյ Հասարակութեան, որ ամեն կիրակի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերն ժամը 6էն մինչև 10ը հիւանդներ պիտի ընդունի իւր բնականը որ է Բերայ Թարլապալի ճատտէսի թիւ 117 և ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը ժամը 6էն մինչև 9ը Պահճէգարու Համիտի թիւ 147-էն գէտի կարգը իր գարուլու Սինապեան վիջէն էֆիստի դեղարանը թիւ 52 :

Ազգ. Հիւանդանոցի ներքին բժիշկ Տօքթօր Գարբիէլ էֆէնտի Նահապետեան, այսուհետև ամեն չորեքշաբթի օրերը ժամը 6էն 8 Սամաթիա Խմբաճօրը Թօգաթիւն Պ. Գարբիէլի դեղարանը, և ուրբաթ օրերը ժամը 6էն 8 դարձեալ Սամաթիա Մ. ճիւլանաքիլին դեղարանը, նաև Հիւանդանոց իրեն դիմող աղքատ հիւանդաց ըստ առաջնոյն ճրի նայելու պատրաստ ըլլալը կը ծանուցանէ արգոյ Հասարակութեան :

ՕՐԱՑՈՅՑ

ՊՍՐԶ

1877

ԹՈՒԱԿԱՆԻՆ ԳՐԻՍՏՈՍԻ

յօրէնալ

յերեմիա քահանայէ Խասգիւղի կը գտնուի բոլոր գրավաճառաց քով, ի գին 60 վարայ :

ԲԱՐԻՉՆ ՅԱՄԵՐԻԿԱՅ

ԳՈՐԾ Է ԼՍՊՈՒԼԷՅԻ

Այս եղական գործին երկրորդ և վերջին հատորն ալ իլմիրի Տէպեան տպարանէն հա-

աած ըլլալով, կը գտնուի Եէնի ճամբ փողոց, Չիլինիլիլէր ճատտէսի, թիւ 8, Ս. Ղ. և Եաղմաճեան դրատունը :

Գին 2 ֆրանք :

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՐՔ

ԲՆԱԿԱՆ ՊՍՏՄՈՒԹԻՒՆ

Թարգմանեց

ՕՐԻՈՐԴ Փ. ԳԷՈՐԳԵԱՆ

կը ծախուի Եէնի-ճամբի փողոց Չիլինիլիլէր ճատտէսի թիւ 8, Ս. Ղ. և Եաղմաճեան դրատունը գին մէկ ֆրանք :

ԳԵՐԱԿԱՆ

130 պատկեր, 48 երեսէ բաղկացեալ ընտիր թղթով և կաղձեալ. կեդրօնատեղին է

Չարդարեան գործարան Կ. Պօլիս Սուլթան Համամ թիւ 14 կը գտնուի նաև ամեն դրախճառաց քով : Գին 40 վարայ :

Գպրոցաց համար հարիւրին 10 ղեղջ :

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒՄ

Փարիզի բժշկական ակադեմիային ծրագրին համեմատ

ԸՆԴՈՒՆՈՒՄ

Երկրորդական և վարժապետական դպրոցներու մէջ :

Հէլէսի

ՆԵՔՏԱՐ ԺՈՐԺ

Բժիշկ և վարժապետ բնական գիտութեանց, անգամ այլևայլ դիտական ընկերութեանց, և ին.

Թարգմանեց

Ս. ԷԹՄԷԻՔՅԱՆ

192 միջակ ութածալ երեսներէ բաղկացեալ հասարակաց ամբիոփ գիրք մ'է այս, որ ամեն կարգի և հասակի մարդոց ալ հասկանալի է իւր պարզութեամբ և յստակութեամբը : կը վաճառուի ամեն դրախճառաց քով, գինն է մէկ քառորդ Մէճիտիլէ :

Գպրոցներու համար հարիւրին տասն ղեղջ կըլլայ :

Ի Լ Ա Ն

ՄԻՀՐԱՆ ԱՐԻԿԵԱՆ

Եաղճը խանքնտա իւթ գաթտա 21 նիւմէրօլու օտտա հաֆթատա հէր կիւն էօյլէնտէն սօնրա թալիպ օլանարա լիտան լէտաֆէթ պէյանը Թիւրքի թալիմ վէ շալիլտանը հէր վէճհէլ խօշնուա իտէճէք տըր :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆ

ՄՍՐԻՕՆ ՏՂԼՕՐՄԻ

Ի Ո Ս ՏՈՎ Ա Ս Ն Ա Ն Բ Ը

կամ

ՊՍՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ

Հեղինակ

ԷՕԺԷՆ ՏՂ ՄԵՐԳՈՒՐ

կը ծախուի Եէնի-ճամբի Չիլինիլիլէր ճատտէսի թիւ 8, Ս. Ղ. և Եաղմաճեան դրատունը գին 2 ֆրանք :

Ամբողջ գործը 2 հատորէ պիտի բաղկանայ :

ԱՆԹՕՆԻՆ

Հեղինակ

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՍԻՄՍ ՈՐԴԻ

Թարգմանեց

ՕՐԻՈՐԴ ՄՍՐԻՍՄ ԹՃԵՐՄԱԿԵԱՆ

կը ծախուի Եէնի ճամբի Չիլինիլիլէր ճատտէսի թիւ 8, Ս. Ղ. և Եաղմաճեան դրատունը : Գին 2 ֆր :

Թէ մայրաքաղաքիս մէջ լինի թէ գաւառները, վարժարաններու մէջ երաժշտութեան և կառավարչութեան սրշտօն վարելու յանձն առնող արժանաւոր և վկայեալ անձ մը լիպ պատրաստ : Ուղղոր կրնայ լրագրոյս դրասենեակէն տեղեկանալ :

ՎԻՍԱԳՐԱՏՈՒՆ

ՊԵՏՐՈՍ ԴԱԼԷՆՏԷՐԵԱՆ

Րիգա-փալա խանէթի

Վիմագրատունս պատրաստ է ամեն տեսակ այցատոմս, հասցէ և վաճառականականու հաշուական խորագրեր խիստ յարգարուն ընտիր և փայլուն ձեւով շինելու դիւրագին եղանակաւ :

Վիմագրատունս կը խոստանայ իրենդիմող յաճախորդները կարելի եղածին չափ դոճ ընել և արդէն վիմագրատան տնօրէնը ճանչցողները, բաւական է որ արուեստական ճաշակի տէր ըլլան կը վկայեն թէ ազնիւն ու գեղեցիկը կատարելապէս կըրնան գտնել :

Ուղղոր ազատ է անձամբ վիմագրատունս դիմել և ինքնին ստուգել ու համազուելու այս ամէնուն ճշմարտութեանը :

ԽՄԲԱԳՐԻՔ

ՏԷՐ ԵՒ ՊՍՏՄՈՒՄՆԱՏՈՒ

ՕԳՄԷՆ ԽՕՃՍՍՐԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Օ. ԽՕՃՍՍՐԵԱՆ Եւուուֆեան խան վերի յարկ թիւ 7